

Ազգային ուսումնական օլիմպիադա

Պատմություն

II փուլ

X-XII դասարաններ

2022-2023 ուսումնական տարի

Հրահանգ 1-3 առաջադրանքների համար. Ժամանակագրական սկզբունքով դասավորել տրված տեղեկությունները: Պատասխանները նշեք վանդակներում: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

1. Ժամանակագրական կարգով դասավորել հոռմեացի քաղաքական գործիչներին՝ ըստ նրանց գործունեության ժամանակաշրջանի:

1. Կատոն Ավագ
2. Ցիցերոն
3. Գայոս Գրակքոսներ

2. Ժամանակագրական կարգով դասավորել պատմական վեպերը՝ ըստ դրանցում նկարագրված դարաշրջանների:

1. Վալտեր Սքոթի «Այվենհոն»
2. Ալեքսանդր Դյումայի «Մարգո թագուհին»
3. Կոնստանտին Գամսախուրդիայի «Վարպետաց վարպետի աջը»

3. Ժամանակագրական կարգով դասավորել Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության պատմության հետ կապված իրադարձությունները:





1. Երկրորդ ինտերնացիոնալի պատվիրակության անդամների այցը Վրաստան
2. Հիմնադիր ժողովի ընտրությունները
3. Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի կողմից Վրաստանի դե-յուրե ճանաչումը

Հրահանգ 4-5 առաջադրանքների համար. Համապատասխանեցրեք երկու սյունակում տրված տեղեկությունները: Յուրաքանչյուր առաջադրանքի գնահատման առավելագույն միավորն է՝ 4:

4. Որոշեք համապատասխանությունն անձի և այն իրադարձության միջև, որտեղ նա կարևոր դեր է խաղացել:

	Անձ		Պատմական իրադարձություն
A	Յան Ժիժկա	1	Երեսնամյա պատերազմ
B	Ալբրեխտ Վալենշտայն	2	Ռիսորջիմենտո
C	Էլ Սիդ	3	Հարյուրամյա պատերազմ
D	Ժան Կալվին	4	Ռեկոնկիստա
		5	Հուսյան պատերազմներ
		6	Ռեֆորմացիա

5. Որոշեք համապատասխանությունը քաղաքի և նրա տեսարժան վայրի միջև:

A		1	Հռոմ
B		2	Բեռլին
C		3	Կորդոբա
D		4	Միլան
		5	Ադրիանապոլիս
		6	Սիդնեյ

Հրահանգ առաջադրանքի համար 6. Ուշադիր ուսումնասիրեք լուսանկարը և պատասխանեք հարցերին: Առաջադրանքի գնահատման առավելագույն միավորն է՝ 9:



- 6.1. Նշե՛ք նկարի ձախ մասում պատկերված թագավորի ինքնությունը:
- 6.2. Ո՞ր պետության դեմ անցկացված ռազմական արշավի մի մասն էր նկարում պատկերված ճակատամարտը և ո՞վ էր այն ժամանակ այդ պետության թագավորը:
- 6.3. Ըստ ավանդության՝ Փոյուզիայի արքան որոշակի տեսակի «գլուխկոտրուկ» էր ստեղծել: Մարգարեության համաձայն՝ ով «լուծեր գլուխկոտրուկը» մեծագույն հաջողության կհասներ: Ի՞նչ անվամբ է հայտնի Փոյուզիայի արքայի ստեղծած «գլուխկոտրուկը» և ինչպե՞ս է այն «լուծել» նկարում պատկերված անձանցից մեկը:
- 6.4. Ինչպե՞ս է կոչվում մարտական կազմավորումը, որը (մեծ մասամբ) պայմանավորում էր նկարում պատկերված հակառակորդների միջև հաղթանակած կողմի հաջողությունը: Նշե՛ք այն անձին, ում վերագրվում է նշված մարտական կազմավորման ձևավորումը:
- 6.5. Նշե՛ք այն քաղաքը, որտեղ հայտնաբերվել է նկարում պատկերված խճանկարը, և ո՞ր պետության կազմում էր ձեր նշած քաղաքը:

Հրահանգ առաջադրանքի համար 7. Ձեր առջև է առաջադրանքի պայմանը: Ուշադիր ընթերցեք այն և ըստ առաջարկած ենթահարցերի ստորև ներկայացված թեմայի վերաբերյալ ձևակերպեք ձեր տեսակետները և փաստարկները:

- *Ձեր կարծիքը ձևակերպեք պարզ, հստակ և հիմնավորված: Դատողությունը պետք է լինի տրամաբանական և պարբերություններով առանձնացված:*
- *Ձեր գրավորը չի ստուգվի, եթե տրված առաջադրանքն ամբողջությամբ ընկալված է ոչ պատշաճ կերպով կամ պարունակում է այնքան լեզվաբանական սխալներ, որ դժվար է հասկանալ միտքը:*

Առաջադրանքի գնահատման առավելագույն միավորն է՝ 10:

Սառը պատերազմի ժամանակաշրջանում տեղի ունեցող իրադարձություններից է 1950-1953 թվականների Կորեական պատերազմը:

7.1. Նշե՛ք մեկ պատճառ, որը հանգեցրեց այս պատերազմի:

7.2. Նշե՛ք այս պատերազմի ռազմական արդյունքը:

7.3. Ո՞ւմ համար բերեց այս պատերազմը դրական քաղաքական արդյունք, բացառությամբ պատերազմի մասնակից կողմերի: Ձեր տեսակետն ամրապնդելու համար բերեք փաստարկ:

7.4. Ո՞ւմ համար բերեց այս պատերազմը բացասական քաղաքական արդյունք, բացառությամբ պատերազմի մասնակից կողմերի: Ձեր տեսակետն ամրապնդելու համար բերեք փաստարկ:

7.5. 1964-1975 թվականներին ընթանում էր Վիետնամի պատերազմը: Ներկայացրեք երկու փաստ (քաղաքական կամ ռազմական), որոնք նմանեցնում են Վիետնամի պատերազմը Կորեական պատերազմին:

7.6. 1964-1975 թվականներին ընթանում էր Վիետնամի պատերազմը: Ներկայացրեք երկու փաստ (քաղաքական կամ ռազմական), որոնք տարբերում են Վիետնամի պատերազմը Կորեական պատերազմից: